ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.04.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/31

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 04.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն 04.03.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման ընթացակարգ (այսուհետ նաև՝Ընթացակարգ):

Ընթացակարգը հայտարարվել է գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2019 թվականի փետրվարի 27-ի թիվ 1 որոշմամբ:

www.gnumner.am և www.armeps.am համացանցային պաշտոնական կայքերում հապարակվել է Ընթացակարգի հրավերը, որի համաձայն հայտերի բացման նիստը պետք է տեղի ունենա 06.03.2019թ. ժամը 11:00-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Այսպիսով, Պատվիրատուն ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով ընթացակարգի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, գնման առարկայի բնութագրերը նկարագրելիս և դրա հատկանիշները սահմանելիս՝ կոպտորեն խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, մասնավորապես.

Պատվիրատուն նշել է, որ 25 աշխատանքային օրվա ընթացքում հաղթող մասնակիցը պետք է վերանորոգի (ապահովի անխափան և նպատակային աշխատանքը) պահեստային մասում առկա թվով 4 (չորս) ապամոնտաժված և անսարք օդորակիչները:

Այս մասով ցանկանում ենք նշել, որ միայն այդ օդորակիչների արտաքին զննության արդյունքնում հնարավոր չէ հասկանալ, թե ինչ դետալներ չեն աշխատում, կամ ինչն է անհրաժեշտ փոխել, կամ միգուցե այդ օդորակիչները վերանորոգելն անհնար է: Այս պարագայում անհրաժեշտ է նախապես կատարել դիագնոստիկ աշխատանքներ, որը հանգեցնում է մինչև պայմանագրի կնքումը լրացուցիչ ծախսերի, որի ռիսկը կրում է

մատակարարը: Այս պարագայում 25 աշխատանքային օր սահմանելը նման աշխատքների համար անհիմն է, ոչ օբյեկտիվ և չի կարող բավարարել այն կարիքին, ինչի համար հայտարարված է սույն գնման ընթացակարգը:

Պատվիրատուն նշել է, որ Ծառայություն մատուցողը պարտավոր է Պատվիրատուի կողմից ծանուցում ուղարկելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային ժամվա ընթացքում մոտենա ծառայության մատուցման՝ ծանուցման մեջ նշված հասցեով և վերանորոգի այն: Ընդ որում, տեղում վերանորոգումը պարտավոր է իրականացնել առավելագույնը 7 աշխատանքային ժամվա ընթացքում: Եթե կոնկրետ օդորակչի վերանորոգումը տեղում հնարավոր չէ կամ դրա տևողությունը գերազանցելու է 7 աշխատանքային ժամը, ապա ծառայություն մատուցողը պարտավոր է այցի օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում ապամոնտաժել խափանված օդորակիչը, դրա փոխարեն տեղադրել պահեստային մասում առկա վերանորոգված օդորակիչներից մեկը, իսկ ապամոնտաժվածը տեղափոխել վերանորոգման համար պահանջվող վայր՝ վերանորոգելով այն առավելագույնը 25 աշխատանքային օրվա ընթացքում:

Այս մասով ցանկանում ենք նշել, որ անհիմն և ոչ օբյեկտիվ Պատվիրատուի այն սահմանումը, որ առավելագույնը 2 (երկու) աշխատանքային ժամի ընթացքում կազմակերպությունը պետք է մոտենա ծառայության մատուցման վայր, քանի որ տեխնիկական բնութագրում նշված է 3 վայր, որտեղ պետք է կազմակերպվի ծառայությունների մատուցումը, իսկ քաղաքային պայմաններից ելնելով հնարավոր չէ միաժամանակ ապահովել 3 վայրում մասնագետների ներկայությունը հենց 2 ժամվա ընթացքում: Բացի այդ, հնարավոր է, որ Պատվիրատուն ծանուցում ուղարկի աշխատանքային ժամի ավարտին մոտ՝ ժամը 16:00-ին կամ 17:00-ին, իսկ այս պարագայում առավելագույնը 7 աշխատանքային ժամվա ընթացքում վերանորոգում իրականացնելը դառնում է ոչ իրատեսական: Կարծում ենք, որ նման խտրական պայմանների սահմանումը չի կարող ապահովել գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցությունը և մասնակիցների շրջանակի ընդլայնումը: Բացի այդ, եթե կազմակերպությունը 7 աշխատանքային ժամվա ընթացքում չի կարողանում վերանորոգել օդորակիչը, ապա պետք է դրա փոխարեն տեղադրել այլ օդորակիչ, ինչը այս պարագայում կրկին հանգեցնում է ավելորդ չհիմնավորված ծախսերի, քանի որ ամեն անգամ կողմը պարտավոր է (անկախ օդորակիչի բարձր հարկում լինելու հանգամանքից) այն ապամոնտաժել, ապա՝ տեղադրել նորը:

Պատվիրատուն նաև նշել է, որ կատարված աշխատանքների ավարտից հետո՝ նույն օրը Ծառայություն մատուցողը պարտավոր է կազմել տեղեկանք կատարված աշխատանքների վերաբերյալ և ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանատուի ստորագրմանը: Ընդ որում, ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանատուն ստորագրում է տեղեկանքը, եթե վերանորոգման արդյունքում օդորակիչը հնարավոր է օգտագործել նպատակային նշանակությամբ:

Այս մասով ցանկանում ենք նշել, որ վերոնշյալ դրույթի սահմանումը խտրական, ոչ իրավական է և չի կարող ապահովել միասնական մոտեցում մասնակիցների համար, քանի որ անհասկանալի է, թե ինչպես է Պատվիրատուն սահմանելու «նպատակային նշանակությամբ» օգտագործելու եզրույթը: Այստեղ կարող է լինել այնպիսի իրավիճակ, որ կազմակերպությունը կատարի ահռելի ծախսեր, վերանորոգի օդորակիչը, կազմի տեղեկանք կատարված աշխատանքների վերաբերյալ և ներկայացնի Պատվիրատուին, սակայն պատասխանատուն չստորագրի այդ տեղեկանքը՝ պատճառաբանելով, որ այն օդորակիչը, որը վերանորոգվել է, չի կարող օգտագործվել նպատակային նշանակությամբ: Իսկ այստեղ պարզ չէ, արդյոք կատարված աշխատանքի համար կողմը վճարվելու է թե ոչ, թե պետք է սպասի այնքան, մինչև օդորակչի օգտագործումը դառնա նպատակային:

Պատվիրատուն տեխնիկական բնութագրով սահմանել է նաև տարատեսակ տույժեր և տուգանքներ, տարբեր իրավիճակների համար: Տպավորությունն այնպիսին է, որ վերջինս տեխնիկական բնութագրեր կազմելիս ավելի շատ մտածել է տուգանքներ սահմանելու մասին, քան որակյալ և մատչելի ծառայություն ստանալու մասին: Բացի այդ, այդ սահմանված տուգանքները ինքնին հակասում են պայմանագրի նախագծով սահմանված տույժերի և տուգանքների սահմանումներին, իսկ եթե Պատվիրատուն ցանկանում է իրոք սահմանել դրանք, ապա անհրաժեշտ է այն նախատեսել պայմանագրի նախագծում, քանի որ նախագծի հիման վրա է կնքվում պայմանագիր, իսկ պայմանագրի նախագծում միայն կողմերի համաձայնության դեպքում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնց չեն հակասում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին:

Այստեղ ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ սույն բնութագրեր-պայմանները գրված են այնպես, որ միայն մեկ մասնակից կարողանա մասնակցել սույն մրցույթին, քանի որ միայն այս դեպքում է հնարավոր դառնում 2 ժամվա ընթացքում մոտենալ Պատվիրատուի կողմից նշված վայր (երեք տարբեր հասցեներ), 7 ժամվա ընթացքում կատարել օդորակիչի վերանորոգում՝ որը համապատասխան ստորաբաժանումը կհամարի նպատակային, և այդ ամենի արդյունքում որևէ տույժ և տուգանք չի կիրառվի: Եթե

այդպիսի նպատակ է եղել, ուրմեն Պատվիրատուն կարող է կազմակերպել մրցույթ մեկ անձից գնման ձևով, այլ ոչ թե այլ մրցակցային:

Պատվիրատուն նշել է, որ սույն տեխնիկական բնութագրի շրջանակում «օդորակիչ» հասկացությունն իր մեջ ներառում է օդորակիչներն իրենց պատկանելիքներով (ներքին և արտաքին խողովակներ, կառավարման վահանակներ և ցանկացած այլ տեսակի սարքավորումներ, նյութեր, տվիչներ, դետալ, ֆրիոն գազ և այլն):

Այս մասով հայտնում ենք, որ օդորակիչի վերանորոգման արդյունքում առանց միավոր գների բացվածքի սխալ է հաշվարկել և ներկայացնել միջինացված գին, քանի որ այդ պարագայում կարելի է վերանորոգել 5 օդորակիչ, և Պատվիրատուի կողմից նախատեսված գումարը չբավարարի այլ ծառայությունների մատուցման համար: Քանի դեռ կազմակերպություններից չի պահանջվել դետալների կամ ծառայությունների համար նախատեսված միավոր գնի հաշվարկ, Պատվիրատուն չի կարող ճիշտ հաշվարկ կատարել:

Պատվիրատուն նշել է, որ այցի պահանջը ներկայացվում է էլեկտրոնային ծանուցմամբ և հեռախոսակապի միջոցով մասնակցի կողմից տրամադրված հեռախոսահամարին (հեռախոսահամարը պետք է լինի մշտապես հասանելի) զանգի միջոցով:

Այս մասով ևս ցանկանում ենք նշել, որ հեռախոսազանգի միջոցով մասնակցի հետ կապվելը չի կարող լիարժեք ապահովել այցի պատշաճ ծանուցման փաստը, քանի որ հեռախոսազանգը չի կարող համարվել պատշաճ ծանուցման ձև, և դա որևէ իրավական հետևանք չի կարող առաջացնել կողմերից որևէ մեկի համար:

Պատվիրատուն նշել է, որ արդյունքի երաշխիքային ժամկետ է սահմանվում Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օրը:

Այս մասով պետք է նշել, որ հնարավոր չէ ապահովել օգտագործված օդորակիչի վրա թեկուզ նոր դետալի փոխարինումը և դրա համար նախատեսել 180 օր երաշխիքային ժամկետ, քանի որ, այլ՝ հին, չաշխատող դետալիների առկայության պարագայում կարող է նաև վնասվել նոր փոխարինվածը: Երաշխիք հնարավոր է ներկայացնել միայն ամբողջությամբ նոր օդորակիչի համար, այլ ոչ թե հին օդորակիչի, որի վրա փոխարինվել է որևէ դետալ:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման

ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի հրավերում նման տեխնիկական բնութագրեր սահմանելով Պատվիրատուն մրցակցության հավասար պայմաններ չի ապահովել հնարավոր մասնակիցների համար, այլ նման բնութագրերը հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, օբյեկտիվորեն հիմնավորված չեն և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.03.2019թ. թիվ 1/18-3/3686-19 ներկայացված դիրքորոշմանը Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում կայացնելիս առաջնորդվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով սահմանված իրավական հիմքերով: Մասնավորապես, Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները, այն է՝ պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը: Այս պարագայում զարմանալի, ծիծաղելի և տարակուսելի է, որ պետական գնումների բնագավառում լիազորված մարմինը՝ այդ մարմնի աշխատակազմի կողմից է հայտնվում նման դիրքորոշում:

Ինչ վերաբերում է վերջինիս դիրքորոշմանը այն մասին, թե ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում ներառված տույժ-տուգանքները պայմանագրի կնքման փուլում կներառվեն նաև պայմանագրի համապատասխան մասում, ընդհանրապես չի կարող բխել Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջներից, քանի որ սխալ հրավերի, սխալ տեխնիկական բնութագրեր կազմելու արդյունքում կազմակերպությունները չեն կարողացել մասնակցել գնման ընթացակարգին, այն պարզ պատճառով, որ պատվիրատուի նման գործողությունների արդյունքում փորձ է արվել արհեստականորեն սահմանափակել այլ մասնակիցների մասնակցությանը, բացի իրենց կողմից նախընտրելի մասնակցից: Այս փուլում, այն ժամանակ երբ արդեն ներկայացվել են հայտեր, և հնարավոր չէ ապահովել այլ մասնակիցների մասնակցությունը, անհրաժեշտ է ոչ թե բողոքը ներկայացնելուց հետո

կատարել այդ փոփոխությունները, այլ՝ չեղյալ հայտարարել գնման ընթացակարգը և հայտարարել նոր, Օրենքից բխոր գնման ընթացակարգ: Թեպետ այս պարագայում ուրախալի է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը ընդունել է իր սխալները և պատրաստ է դրանք ուղղել:

Վերոգրյալով պայմանավորված՝ խնդրում ենք բողոքը բավարարել, հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը ընդունել է իր կողմից հրավերում կայացված սխալները՝ ընդունելով վերոհիշյալ իրավական նորմերի փաստացի խախտումները»:

Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կայացնել նույն ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի լիազորված ներկայացուցիչ Լինա Քոչարյան:

2. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.03.2019թ. թիվ 1/18-3/3686-19 գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ԳԲԽ-ԷՍ/1/3524-19 գրությամբ ներկայացված Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի բողոքը՝ հայտնում ենք հետևյալը.

1. ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է 25 աշխատանքային օրյա ժամկետ համապատասխան օդորակիչների վերանորոգման համար: Հատկանշական է, որ տեխնիկական բնութագրով սահմանվել է հնարավոր մասնակցի՝ օդորակիչների տեխնիկական վիճակին ծանոթանալու իրավունքը, ընդ որում, այդ իրավունքի իրացման սահմանների (այցելությունների քանակ, ստուգման զանազան եղանակների կիրառում) ընտրությունը տեխնիկական բնութագրով ամբողջովին թողնված է հնարավոր մասնակցին և նման պայմաններում Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի որակումները համարում ենք լիովին անհիմն:

Անհիմն լինելու մեր պնդումը հիմնավորվում է նաև նրանով, որ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից հնչեցված կարծիքը չի հիմնավորվում որևէ փաստական հանգամանքով, այսինքն, վերջինիս կողմից նույնիսկ փորձ չի արվել ծանոթանալ օդորակիչների տեխնիկական վիճակին, որից հետո նոր փորձել ներկայացնել որոշակի պնդումներ: Ավելին, կազմակերպված գնման գործընթացին մասնակցելու համար առանց տեխնիկական բնութագիրը խտրական համարելու հայտ է ներկայացրել մեկ այլ սուբյեկտ, իսկ մյուսը՝ օգտվելով օրենսդրությամբ սահմանված իր իրավունքից, խնդրել է հրավերի պարզաբանում, ինչից հետո ձեռնպահ է մնացել հայտ ներկայացնելուց: Վկայակոչվածը ևս մեկ անգամ հիմնավորում է, որ սահմանված են օրենսդրությանը հապատասխանող չափանիշներ և յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտ՝ գնահատելով սեփական ռեսուրսները՝ ինքն է կայացնում համապատասխան որոշում:

2. Ձեռքբերվող ծառայության մատուցման համար նշված 3 հասցեները գտնվում են Երևան քաղաքում, ուստի 2 աշխատանքային ժամում նշված հասցեներով մոտենալը (եթե Պատվիրատուն ծանուցել է 17.00-ին, ապա Կատարողը կարող է մոտենալ հաջորդ աշխատանքայի օրվա 10.00-ն ներառյալ) ու 7 աշխատանքային ժամվա ընթացքում օդորակիչ վերանորոգելը լիովին իրատեսական է, և որևէ անհիմն կամ ոչ օբյեկտիվ պայմաններ չի սահմանում: Ավելին, բողոք բերող անձի կողմից նկարագրվել է կատարյալ սահմանափակ իրավիճակ, երբ, ըստ իրեն, մեկ մասնագետ պետք է ապահովի միաժամանակ երեք հասցեներում ներկայություն: Նշված տեսակետը բացարձակապես անտրամաբանական է, քանի որ հստակ նկարագրված են գնման կարիքը և ժամկետները, իսկ թե ստանձնած պարտավորությունների կատարումը սահմանված ժամկետներում ապահովելու համար կատարողը ինչ անձնակազմ և այլ ռեսուրսներ պետք է ունենա, դա ամբողջությամբ մասնակցի տնօրինչական իրավունքն է:

3. Օդորակիչը նպատակային նշանակությամբ օգտագործելու հասկացության բացակայության վերաբերյալ բողոք բերող անձի հարցը, կարծում ենք, որ չէր առաջանա, եթե վերջինիս կողմից մանրամասն ընթերցվեր տեխնիկական բնութագիրը: Մասնավորապես, ըստ տեխնիկական բնութագրում հստակ սահմանված համապատասխան դրույթների՝ նպատակային նշանակությամբ աշխատանքը վերանորոգման արդյունքն է, որը ապահովում է օդորակիչների տեխնիկական անձնագրերով նախատեսված օդորակչի աշխատանքը: Մատուցողի պարտականությունների խախտման ռիսկը կրճատելու և փոխհատուցելու նպատակով, Պատվիրատուն կարող է սահմանել տույժեր և տուգանքներ, ինչը չի հակասում ՀՀ

օրենսդրությամբ սահմանված նորմերին: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև այն, որ բոլոր տույժ-տուգանքները նշված են տեխնիկական բնութագրում, ինչը հանդիսանում է պայմանագրի նախագծի անբաժանելի մասը:

4. Գնման գործընթացը համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությանը՝ տեխնիկական բնութագրում առկա չէ որևէ դրույթ, որը հանգեցնում է մասնակիցների շրջանակի կամ իրավունքների սահմանափակմանը: Այն ներկայացված է հստակ, առանց երկակի մեկնաբանության և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

5. Պատվիրատուն իր կարիքների բավարարման նպատակով հայտարարել է ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով հայտարարություն ու հրավեր և յուրաքանչյուր մասնակից ինքը՝ ուսումնասիրելով հրավերի համապատասխան պահանջները, ներառյալ տեխնիկական բնութագրինը, գնահատելով սեփական ռեսուրսները՝ կայացնում է համապատասխան որոշում, և առաջարկում է գնման առարկայի գին՝ հաշվի առնելով բոլոր ռիսկերը:

6. Հրավերի տեխնիկական բնութագրով հստակ սահմանված է, որ Պատվիրատուն այցի պահանջը ներկայացնում է հեռախոսազանգի և էլեկտրոնային ծանուցման միջոցով, իսկ էլեկտրոնային ծանուցումը համարվում է պատշաճ ծանուցման ձև:

7. 26.01.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության և Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի միջև կնքվել է էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման (օդորակիչների սպասարկման) ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր (ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով), որտեղ ծառայության արդյունքի երաշխիքային ժամկետը սահմանված է եղել 180 օրացուցային օր և Մասնակցի կողմից որևէ առարկություն չի եղել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնման գործընթացը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով ձեռնարկվել է տվյալ գնումը: Այն իրականացվել է մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով՝ ապահովելով մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, չհանգեցնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը»:

Ի լրումն 07.03.2019թ. թիվ 1/18-3/3686-19 գրության ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.03.2019թ. թիվ 1/18-3/3726-19 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Բողոքներ քննող անձի կողմից բողոքարկման վարույթը հարուցվել է Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի բողոքի հիման վրա, հետևաբար, նախևառաջ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ վերջինիս՝ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ բողոք բերելու «իրավական շահագրգռվածություն» ունենալու և վերջինիս բողոքի հիման վրա Ձեր կողմից բողոքարկման վարույթ հարուցելու իրավաչափությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ: Նշված հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին կամ դատական կարգով բողոքարկելու գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Վերոնշյալ իրավական նորմերի մեկնաբանությունը՝ թույլ է տալիս փաստել, որ Օրենքը, սահմանելով գնումների ընթացակարգը բողոքարկելու կարգը և բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը (ընդ որում՝ ելնելով իրավական որոշակիության սկզբունքից՝ թե արտադատական, թե դատական բողոքարկման գործընթացում բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը պետք է նույնական լինի) հղում է կատարում ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 04.04.2008 թվականի ՍԴՈ-747 որոշման 7-րդ կետում, անդրադառնալով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված յուրաքանչյուրին

վերապահված իրավական պաշտպանության մեխանիզմների մեկնաբանությանը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի սահմանադրականության հարցին, ամրագրել է հետևյալը՝ « (...) անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են»:

Հիմք ընդունելով 04.04.2008 թվականի ՍԴՈ-747 որոշման 7-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 07.09.2010թ. թիվ ՍԴՈ-906 որոշմամբ հետագայում արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքները խախտվել են: Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը (actio popularis)՝ որպես այդպիսի դեպք քննարկելով հասարակական կազմակերպությունների կամ այլ միավորումների կողմից կոլեկտիվ իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության հարցերը՝ միաժամանակ նշելով, որ ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու իրավունքը պետք է վերապահել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:

Այսպիսով՝ վերը շարադրվածի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Օրենքի 46-րդ հոդվածով ամրագրված պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին և դատական կարգով բողոքարկելու իրավունքը չի կարող մեկնաբանվել ավելի լայն, քան ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումների պահանջներն են՝ հաշվի առնելով նաև actio popularis սկզբունքի

պահպանումը: Հետևաբար, ցանկացած պարագայում պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները բողոքարկելու (այդ թվում՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի) իրավունքը վերապահված է միայն շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են, կամ որ նույնն է այդ իրավունքը կարող է իրացվել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ անձն ունի իրավական շահագրգռվածություն, իսկ ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով բողոքարկման իրավունքը պետք է վերապահել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:

Սակայն, տվյալ դեպքում բողոք քննող անձը բողոքարկման վարույթ հարուցելիս պետք է անդրադառնար Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի իրավական շահագրգռվածությունը սույն գործում, և անհասկանալի է՝ վերջինս իր որ իրավունքների պաշտպանությամբ է հանդես գալիս: Մինչդեռ, նշված հանգամանքի պարզումը վճռորոշ նշանակություն ունի Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի բողոքը քննության առնելու հարցի իրավաչափության տեսանկյունից, առավել ևս, որ վերջինս վիճարկել է գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացմանն ուղղված գործողությունների իրավաչափությունն այն դեպքում, երբ նա քննարկվող ընթացակարգին չի մասնակցել և դրա շրջանակներում հայտ չի ներկայացրել:

Ի լրումն 07.03.2019թ. թիվ 1/18-3/3686-19 և թիվ 1/18-3/3726-19 գրությունների ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.03.2019թ. թիվ Ն/1,2/659-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ԳԲՔԱ-ԷՍ-2019/31 բողոքով անցկացված նիստերի ժամանակ Ձեր կողմից արված հարցադրումներին և ի լրումն բողոքի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված գրությունների՝ հայտնում ենք հետևյալը.

1. ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով ընթացակարգի շրջանակում կազմված տեխնիկական բնութագրում նախատեսված է, որ «Պատվիրատուի կողմից պահանջը ներկայացվում է էլեկտրոնային ծանուցմամբ և հեռախոսակապի միջոցով մասնակցի կողմից տրամադրված հեռախոսահամարին (հեռախոսահամարը պետք է լինի մշտապես հասանելի) զանգի միջոցով:»: Նշված դրույթի՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վերլուծելու և մեկնաբանելու արդյունքում աներկբա հանգում ենք այն եզրահանգման, որ պատվիրատուի կողմից սահմանվել են մասնակցի շահերի պաշտպանության համար առավել նպաստավոր պայմաններ, քանի որ պահանջը կամ ծանուցումը պատշաճ ներկայացված համարելու համար սահմանվել է երկու՝

միաժամանակյա («և» շաղկապով բաժանված) կատարման ենթակա պայման: Այսինքն, պատվիրատուն ուղարկելով էլ. ծանուցում միաժամանակ ստանձնել է այդ ծանուցման հասցեականությունը ստուգելու պարտականություն՝ մասնակցի կողմից տրամադրված մշտապես հասանելի հեռախոսահամարին զանգելու և ճշտելու միջոցով:

2. Տեխնիկական բնութագրում սահմանված է. «Ծառայություն մատուցողի այցի ժամը ֆիքսվում է վերջինիս և ՀՀ ՖՆ ներկայացուցչի հետ շենք մուտք գործելու պահին ստորագրվող ****տեղականքում», այնուհետև, որպես տեխնիկական բնութագրում օգտագործվող հասկացություն հաջորդող հատվածում նշված է. «Սույն տեխնիկական բնութագրի շրջանակում միևնույն տեղեկանքում նշվում է ինչպես շենք մուտք գործելու ժամը, այնպես էլ «Այլ պարտականություններ և պատասխանատվություն» բաժնում նախատեսված տեղեկատվությունը:»: Նշվածի կապակցությամբ հայտնում ենք, որ «Այլ պարտականություններ և պատասխանատվություն» բաժնում նախատեսված է այն տեղեկատվությունը, որը բողոք բերող անձի կողմից վիճարկվում է: Այսպիսով, վկայակոչված կարգավորումների բովանդակության ուղղակի և տառացի էությունը կայանում է նրանում, որ ցանկացած ձևաչափի «Տեղեկանք» կոչվող փաստաթղթում պարտադիր նշվի երկու տեսակի բովանդակային տեղեկատվություն՝ ա) մուտքի-ելիքի ժամ, բ) աշխատանքը ավարտելու մասին ժամ: Այսինքն, խնդրո առարկա տեղեկանքը չի հանդիսանում և չի էլ կարող հանդիսանալ գնումների մասին օրենսդրությամբ հստակ սահմանված ծառայությունների մատուցման փաստը ֆիքսող հանձնման-ընդունման արձանագրություն, այլ հանդիսանում է կողմերի միջև ծագած պայմանագրային հարաբերությունները պատշաճ ամրագրող փաստաթուղթ, որը նպատակ ունի կանխարգելել հետագա բոլոր տեսակի առաջացող տարընթերցումները՝ կապված ժամերի արձանագրման հետ, իսկ ժամերի արձանագրմանը տրվել է կարևորություն, քանի որ դրանց չպահպանման համար նախատեսված են տույժեր: Ինչ վերաբերում է տեղեկանքը նույն օրը կազմելուն, ապա ինչպես նշված է տեխնիկական բնութագրում՝ տեղեկանքը նախևառաջ լրացվում է շենք մուտք գործելուց, այսինքն, ֆիզիկապես այդ պահից տեղեկանքը արդեն կազմվում է, հետևաբար, աշխատանքի ավարտից հետո միևնույն տեղեկանքում սահմանված հաջորդ գրառումը մասնակցի կողմից կատարելը որևէ դեպքում և իրադարձությունների ցանկացած զարգացման ժամանակ չի կարող հանդիսանալ դժվարություն կամ խոչընդոտ, քանի որ արդեն իսկ կազմված փաստաթղթի վրա պետք է ավելանա ընդամենը գրառում: Ինչ վերաբերում է պատվիրատուի կողմից օդորակիչ ստուգելուն, այնուհետև տեղեկանքը ստորագրելուն՝ դա բխում է փոխադարձ

իրավունքների և պարտականությունների պաշտպանվածությունն ապահովելուն և փոխադարձ կամայականությունները զսպելուն: Այսինքն, չլինի իրավիճակ, երբ տեղում վերանորոգելու ժամանակը լրանա, օդորակիչը մնա անսարք և մասնակիցը ապամոնտաժելուց խուսափելու համար ձևական գրառում կատարի, որ օդորակիչը սարքին է և հեռանա և այլն: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք արձանագրել, որ այս դրույթը ևս նպատակ ունի առավել պաշտպանել մասնակցի և պատվիրատուի շահերը:

3. Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից 180 օրացուցային օրվա համար սահմանված է երաշխիքային ժամկետ: Համաձայն տեխնիկական բնութագրի՝ ծառայության արդյունքն ապահովելու համար մասնակիցը պարտավոր է վերանորոգել, մշտապես սպասարկել, լիցքավորել, ապամոնտաժել, տեղադրել օդորակիչները: Նշված դրույթից ուղղակիորեն բխում է, որ ծառայության արդյունքի ապահովումը առավելապես պայմանավորված է մասնակցի կողմից իրականացվող գործողություններից, հետևաբար երաշխիքային ժամկետ սահմանվում է այդ գործողություններից յուրաքանչյուրի կատարման համար: Ավելին, այս դրույթի իրագործման համար սահմանված է ամսական հաշվետվություններ ներկայացնելու պարտականություններ, այսինքն այդ հաշվետվություններում նշված կոնկրետ գործողությունների համար է գործելու երաշխիքային ժամկետ: Հակառակ տրամաբանություն չի կարող գործել, քանի որ անձը չի կարող կրել այնպիսի պարտականություններ, որոնց ծագման համար վերջինս պայմանագրով որևէ դերակատարում չի ունեցել:

4. Ինչ վերաբերում է տեխնիկական բնութագրում նշված տույժերին, ապա դա նախատեսված է որպես ծանոթագրություն և բացվածք մասնակցի համար, որպեսզի վերջինիս համար հասկանալի լինի պայմանագրի նախագծում նախատեսված տույժերի և տուգանքների բովանդակային բացվածքը: Միաժամանակ կարծում ենք, որ տեխնիկական բնութագրում նման դրույթներ նախատեսելը պետք է դիտարկվի ոչ թե օրենսդրությանը հակասության տեսանկյունից, այլ հաշվի առնել այն հանգամանքը, որ նախատեսված են օրենսդրությամբ տեխնիկական բնութագրի ձևին և բովանդակությանը բավարարող պահանջներ, իսկ խնդրո առարկա դրույթները՝ չհակասելով ընդհանուր պահանջներին սահմանված են որպես ծանոթագրություն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք որոշում կայացնելիս հաշվի առնել սույն պարզաբանումները ևս, կամ առաջնորդվելով գնումների հետ կապված բողոքներ քննող

անձանց գործունեության կարգի 13-րդ կետով՝ հաշվի առնելով լրացուցիչ քննարկումների անհրաժեշտությունը՝ երկարաձգել բողոքի քննության ժամկետը:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Մարիամ Սարգսյանը և Անի Աղաբաբյանը:

4. ԳԲՔԱ-ԷՍ-2019/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի կողմից 04.03.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության 07.03.2019թ. թիվ 1/18-3/3686-19, թիվ 1/18-3/3726-19 և 25.03.2019թ. թիվ Ն/1,2/659-2019 գրությունները, ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը.

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների (այսուհետ նաև՝ Ծառայություն) ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածով սահմանված է Ծառայության հետևյալ նկարագիրը.

«Օդորակիչների մշտական անխափան աշխատանքն ապահովում է ծառայություն մատուցողը պայմանագրի գործողության ընթացքում՝ սեփական միջոցներով և պատասխանատվությամբ իրականացնելով կից ցանկում նշված օդորակիչների անխափան և նպատակային աշխատանքի համար պահանջվող ցանկացած տեսակի աշխատանքներ.

Օդորակիչների սպասարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող ցանկացած պահեստամաս, նյութ, աշխատանք, ծառայության վճար և ցանկացած տեսակի այլ ծախս, ինչպես նաև տեղափոխման, տեղադրման, ապամոնտաժման համար անհրաժեշտ միջոցները տրամադրում և իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որոնց արժեքը ներառվում է ծառայության մատուցման՝ պայմանագրով սահմանված գնի մեջ: Բացի այդ, սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների (227 հատ) տեղափոխումը վերանորոգման կետ ու վերադարձը ևս, իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը՝ ք.

Երևան, Մ.Ադամյան-1, Կոմիտասի 54բ և Մազմանյան 5 հասցեներից: Ընդ որում, պայմանագրով նախատեսված գինն իր մեջ ներառում է պայմանագրի գործողության ողջ ընթացքում օդորակիչների մշտական և անխափան աշխատանքի ապահովման համար կատարողի ծառայության տարեկան վճարը: Այսինքն, կատարողը պարտավոր է պայմանագրով նախատեսված ծառայությունը մատուցել պայմանագրի գործողության ողջ ընթացքում և դրա համար իրավասու չէ պատվիրատուից պահանջել լրացուցիչ գումար:

Ծառայության մատուցումը.

1. Ծառայություն մատուցողը պարտավոր է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը 25 աշխատանքային օրվա ընթացքում **վերանորոգել (ապահովել անխափան և նպատակային աշխատանքը) պահեստային մասում առկա թվով 4 (չորս) ապամոնտաժված և անսարք օդորակիչները, որոնք ըստ անհրաժեշտության ծառայելու են տեղադրված օդորակիչների փոխարինման (այդ թվում՝ ժամանակավոր) համար.

2. Ծառայություն մատուցողը պարտավոր է Պատվիրատուի կողմից ***ծանուցում ուղարկելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային ժամվա ընթացքում մոտենալ ծառայության մատուցման՝ ծանուցման մեջ նշված հասցե և վերանորոգել այն: Ընդ որում, տեղում վերանորոգումը պարտավոր է իրականացնել առավելագույնը 7 աշխատանքային ժամվա ընթացքում: -կա հակասություն երկու գրվածի միջև: Եթե կոնկրետ օդորակչի վերանորոգումը տեղում հնարավոր չէ կամ դրա տևողությունը գերազանցելու 7 աշխատանքային ժամը, ապա ծառայություն մատուցողը պարտավոր է այցի օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում ապամոնտաժել խափանված օդորակիչը, դրա փոխարեն տեղադրել պահեստային մասում առկա վերանորոգված օդորակիչներից մեկը, իսկ ապամոնտաժվածը տեղափոխել վերանորոգման համար պահանջվող վայր՝ վերանորոգելով այն առավելագույնը 25 աշխատանքային օրվա ընթացքում.

3. Ծառայություն մատուցողը պարտավոր է բացի ծանուցման հիմքով կատարվող աշխատանքներից պարբերաբար (այն հաճախականությամբ, որը ցուցված է օդորակիչների արտադրողների կողմից) կատարել օդորակիչների պրոֆիլակտիկա (ներսի և դրսի բլոկների փոշեզրկում, լվացում, ֆիլտրների մաքրում և փոխարինում և այլն).

4. Սույն պարբերության 3-րդ կետում նշված պրոֆիլակտիկայի շրջանակում օդորակիչների աշխատանքի մեջ խնդիրներ հայտնաբերելու դեպքում սեփական նախաձեռնությամբ իրականացնել դրանց վերանորոգումը՝ սույն տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններով և ժամկետներում:

Այլ պարտականություններ և պատասխանատվությունը.

1. Կատարված աշխատանքների ավարտից հետո՝ նույն օրը Ծառայություն մատուցողը պարտավոր է կազմել ****տեղեկանք կատարված աշխատանքների վերաբերյալ և ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանատուի ստորագրմանը: Ընդ որում, ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանատուն ստորագրում է տեղեկանքը, եթե վերանորոգման արդյունքում օդորակիչը հնարավոր է օգտագործել նպատակային նշանակությամբ: Տեղեկանքը չստորագրելու դեպքում այդ մասին նշվում է տեղեկանքում և Ծառայություն մատուցողի նկատմամբ անպատշաճ որակի մատուցած ծառայության յուրաքանչյուր դեպքի համար կիրառվում է պայմանագրով նախատեսված տուգանք՝ պայմանագրի գնի 1,5 (մեկուկես) տոկոսի չափով՝ բացառությամբ մեկ եռամսյակի ընթացքում հայտաբերված 3-րդ դեպքի: Նման դեպքերում, եթե մեկ եռամսյակի ընթացքում 3 (երեք) և ավել անգամ մատուցվել է սույն տեխնիկական բնութագրին անհամապատասխան ծառայություն, այսինքն՝ սահմանված ժամկետում օդորակիչը չի վերանորոգվել և դրա հետևանքով տեղեկանքը ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանատուի կողմից չի ստորագրվել, ապա պատվիրատուն պարտավոր է միակողմանիորեն լուծել պայմանագիրը կամ ծառայություն մատուցողի նկատմամբ կիրառել տուգանք՝ պայմանագրի գնի 20 (քսան) տոկոսի չափով: Սույն կանոնը տարածվում է յուրաքանչյուր եռամսյակի նկատմամբ.

2. Եթե ծառայություն մատուցողը ստանալով պատվիրատուի կողմից տրված ծանուցումը խախտում է այն՝ ապա պատվիրատուն կիրառում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացած ժամի համար պայմանագրի գնի 0,2 տոկսի չափով, բայց ոչ ավել քան 24 աշխատանքային ժամվա համար: 24 աշխատանքային ժամը լրանալու դեպքում կիրառվում է վերոնշյալ տույժը և տուգանք՝ պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով: Մեկ եռամսյակի ընթացքում 5 և ավել անգամ ժամկետի խախտման դեպք արձանագրվելու դեպքում պատվիրատուն պարտավոր է միակողմանիորեն լուծել պայմանագիրը կամ կիրառել տուգանք՝ պայմանագրի գնի 20 (քսան) տոկոսի չափով: Սույն կանոնը տարածվում է յուրաքանչյուր եռամսյակի նկատմամբ: Ծառայություն մատուցողի մուտքը արձանագրվում է տեղեկանքում կատարողի կողմից շենք մուտք գործելու պահին՝ կողմերի ստորագրությամբ.

Ծառայություն մատուցողը պարտավոր է յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն՝ ոչ ուշ քան մինչև հաջորդ ամսվա 10-ը: Սույն պարտականության խախտման համար

կիրառվում է տույժ՝ ուշացած յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի գնի 0,1 տոկոսի չափով:

Սույն տեխնիկական բնութագրի շրջանակում «օդորակիչ» հասկացությունն իր մեջ ներառում է օդորակիչները իրենց պատկանելիքներով (ներքին և արտաքին խողովակներ, կառավարման վահանակներ և ցանկացած այլ տեսակի սարքավորումներ, նյութեր, տվիչներ, դետալ, ֆրեոն գազ և այլն):

Սույն տեխնիկական բնութագրի շրջանակում «վերանորոգել» հասկացությունն իր մեջ ներառում է օդորակիչների անխափան, նպատակային (օդորակիչների տեխնիկական անձնագրով/բնութագրով նախատեսված կարգով) աշխատանքի համար պահանջվող գործողությունների, աշխատանքների, ծառայությունների ամբողջություն:

Պատվիրատուի կողմից պահանջը ներկայացվում է էլեկտրոնային ծանուցմամբ և հեռախոսակապի միջոցով մասնակցի կողմից տրամադրված հեռախոսահամարին (հեռախոսահամարը պետք է լինի մշտակապես հասանելի) զանգի միջոցով: Պահանջը ստանալուց հետո 2 ժամվա ընթացքում համապատասխան մասնագետը այցելում է համապատասխան հասցե՝ օդորակիչը վերանորոգելու համար: Ընդ որում, Ծառայություն մատուցողի/աշխատակցի այցի ժամը ֆիքսվում է վերջինիս և ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցչի հետ շենք մուտք գործելու պահին ստորագրվող ****տեղեկանքում.

Սույն տեխնիկական բնութագրի շրջանակում միևնույն տեղեկանքում նշվում է ինչպես շենք մուտք գործելու ժամը, այնպես էլ «Այլ պարտականություններ և պատասխանատվությունը» բաժնում նախատեսված տեղեկատվությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.

Նախորդ 2 տարիների ընթացքում վերանորոգվել են առկա օդորակիչների մոտ 30%-ը: Պահեստային մասում առկա են թվով 4 հատ անսարք օդորակիչ: Օդորակիչների տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հրավերը հրապարակելու օրվա դրությամբ: Անսարք վիճակում են գտնվում ԱՏՍ-ի սենյակի Vega 12000 BTU, արխիվի աստիճանավանդակի Vestel 12000 BTU մակնիշի օդորակիչները: Մասնակիցը մինչև մրցույթը կարող է ծանոթանալ տարածքներում առկա բոլոր օդորակիչների տեխնիկական վիճակին: Ընդ որում, տեխնիկական վիճակին չծանոթանալը չի կարող հիմք հանդիսանալ պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման համար:»:

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի մաս կազմող թիվ 5 հավելվածով՝ Պայմանագրի նախագծով, սահմանվել են հետևյալ պայմանները.

• 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

• 5.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

• 5.5 կետի համաձայն՝ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

• 3.1 կետի համաձայն՝ մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

• 3.2 կետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

• 3.3 կետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի ներկայացուցիչը պնդեց բողոքն ամբողջությամբ և հայտնեց, որ Պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագրում առկա են պայմաններ և պահանջներ, որոնք չեն բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից, խտրական են, և չեն ապահովում հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմաններ, ինչն իր հերթին հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը: Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի ներկայացուցիչը հավելեց, որ Պատվիրատուն գնման առարկայի տեխնիկական բնութագրով սահմանելով տույժեր և տուգանքներ՝ ևս խախտել գնումների մասին ՀՀ օրենսդրության դրույթները, քանի որ սահմանված տույժերն ու տուգանքներն արդեն իսկ նախատեսված են պայմանագրի նախագծի համապատասխան կետերով, իսկ պայմանագրի նախագծում կարող են կատարվել օրենսդրությամբ չարգելված փոփոխություններ բացառապես պայմանագրի կողմերի համաձայնության դեպքում:

Բողոքներ քննող անձի այն հարցին, արդյո՞ք պայմանագրի նախագիծը չի ներառում տույժ և տուգանքի մասին տեղեկատվություն և ի՞նչ եղանակով է աշխատանքը ընդունվում, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ տույժ և տուգանքի մասին տեխնիկական բնութագրում ներառված տեղեկատվությունը կներառվի պայմանագրի նախագծում, իսկ աշխատանքը կհամարվի ընդունված Ծառայությունը մատուցելուց անմիջապես հետո կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված տեղեկանքի համաձայն:

- Բողոքներ քննող անձի այն հարցին, թե Պատվիրատուն ինչ է ի նկատի ունեցել «Արդյունքի երաշխիքային ժամկետ է սահմանվում Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օրը» պայմանը սահմանելով, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Պատվիրատուին ի նկատի է ունեցել յուրաքանչյուր փոխարինված դետալի երաշխիքային ժամկետը, այլ ոչ թե վերանորոգված օդորակիչը:

180 օր երաշխիքային ժամկետ սահմանելով արդյո՞ք

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 24-ի N 238-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևը, որը ներառում է նաև ընթացակարգի արդյունքում կողմերի մինչև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի՝

- 2-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոցն է.

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 3-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են

ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

- 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը:
- 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:
- 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:
- 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 2-րդ կետի համաձայն՝ հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն:
- 33-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

• 108-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

• 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Նույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածով ի թիվս այլ պայմանների, սահմանվել է հետևյալ պայմանները՝

• «Կատարված աշխատանքների ավարտից հետո՝ նույն օրը Ծառայություն մատուցողը պարտավոր է կազմել տեղեկանք կատարված աշխատանքների վերաբերյալ և ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանատուի ստորագրմանը: Ընդ որում, ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանատուն ստորագրում է տեղեկանքը, եթե վերանորոգման արդյունքում օդորակիչը հնարավոր է օգտագործել նպատակային նշանակությամբ(...):

• «...Տեղեկանքը չստորագրելու դեպքում այդ մասին նշվում է տեղեկանքում և Ծառայություն մատուցողի նկատմամբ անպատշաճ որակի մատուցած ծառայության յուրաքանչյուր դեպքի համար կիրառվում է պայմանագրով նախատեսված տուգանք՝ պայմանագրի գնի 1,5 (մեկուկես) տոկոսի չափով՝- բացառությամբ մեկ եռամսյակի ընթացքում հայտաբերված 3-րդ դեպքի: Նման դեպքերում, եթե մեկ եռամսյակի ընթացքում 3 (երեք) և ավել անգամ մատուցվել է սույն տեխնիկական բնութագրին անհամապատասխան ծառայություն, այսինքն՝ սահմանված ժամկետում օդորակիչը չի վերանորոգվել և դրա հետևանքով տեղեկանքը ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանատուի կողմից չի ստորագրվել ապա պատվիրատուն պարտավոր է միակողմանիորեն լուծել պայմանագիրը կամ ծառայություն մատուցողի նկատմամբ կիրառել տուգանք՝ պայմանագրի գնի 20 (քսան) տոկոսի չափով(...):

• Եթե ծառայություն մատուցողը ստանալով պատվիրատուի կողմից տրված ծանուցումը խախտում է այն՝ ապա պատվիրատուն կիրառում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացած ժամի համար պայմանագրի գնի 0,2 տոկսի չափով, բայց ոչ ավել քան 24 աշխատանքային ժամվա համար: 24 աշխատանքային ժամը լրանալու դեպքում կիրառվում է վերոնշյալ տույժը և տուգանք՝ պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով: Մեկ եռամսյակի ընթացքում 5 և ավել անգամ ժամկետի խախտման դեպք արձանագրվելու դեպքում պատվիրատուն պարտավոր է միակողմանիորեն լուծել պայմանագիրը կամ կիրառել տուգանք՝ պայմանագրի գնի 20 (քսան) տոկոսի չափով: Սույն կանոնը տարածվում է յուրաքանչյուր եռամսյակի նկատմամբ: Ծառայություն մատուցողի մուտքը արձանագրվում է տեղեկանքում կատարողի կողմից շենք մուտք գործելու պահին՝ կողմերի ստորագրությամբ»:

- Արդյունքի երաշխիքային ժամկետ է սահմանվում Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օրը:

- ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագիծ թիվ 5 հավելվածով սահմանված են հետևյալ դրույթները.

• 5.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

• 5.5 կետի համաձայն՝ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

• 3.1 կետի համաձայն՝ մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

• 3.2 կետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

• 3.3 կետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

- ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ի թիվս այլոց սահմանվել են պայմաններ, որոնք չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գնման առարկայի բնութագրի բովանդակության տրամաբանությունից և չեն հանդիսանում ձեռք բերվող ծառայության հատկանիշները.

- Հաշվի առնելով, որ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծով հստակ սահմանվել են թե՛ Ծառայություն մատուցողի նկատմամբ անպատշաճ որակի մատուցած ծառայության յուրաքանչյուր դեպքի համար կիրառվող պայմանագրով նախատեսված տույժի և տուգանքի չափը և դրանց վճարման կարգը, և թե՛ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների ընդունման կարգի վերաբերյալ համապատասխան պահանջները, հետևաբար Պատվիրատուն՝ Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանելով վերը նշված պահանջներից տարբերվող և վերջիններիս հակասող այլ պայմաններ՝ գործել է ոչ իրավաչափ, խախտելով Կարգի 33-րդ և 108-րդ կետերով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 24-ի N 238-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերով սահմանված պահանջները:

- «Կատարված աշխատանքների ավարտից հետո՝ նույն օրը Ծառայություն մատուցողը պարտավոր է կազմել ****տեղեկանք կատարված աշխատանքների վերաբերյալ և ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանատուի ստորագրմանը» պայմանը չի հանդիսանում մատուցման ենթակա ծառայության տեխնիկական բնութագրի հատկանիշ, ինչպես նաև հակասում է Կարգով և Հրավերին կից պայմանագրի նախագծով նախատեսված ծառայությունները հանձնելու և ընդունելու կարգին:

- Քանի որ, Պատվիրատուի ներկայացուցիչը հաստատեց, որ «Արդյունքի երաշխիքային ժամկետ է սահմանվում Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օրը» պայմանը սահմանելով, Պատվիրատուին ի նկատի է ունեցել յուրաքանչյուր փոխարինված դետալի երաշխիքային ժամկետը, այլ ոչ թե վերանորոգված օդորակիչը, ապա նշված սահմանումը ևս հստակ չէ և տեղիք է տալիս տարակերպ մեկնաբանության:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի 07.03.2019թ. թիվ 1/18-3/3726-19 գրությամբ բողոքի ներկայացման իրավական հիմնավորվածությանը, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն աբողջովին անհիմն է, հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 46-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները,

- 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին,

- 3-րդ մասի 2-ին կետի համաձայն՝ դատական կարգով բողոքարկելու գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նշված դրույթներով օրենսդիրը իմպետարիվ ամրագրել է յուրաքանչյուր անձի՝ նախքան պայմանագրի կնքումը պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքարկելու իրավունքը, սակայն ներկայացված դիրքորոշումը որևէ կերպ վերաբերելի չէ գնումների գործընթացում արտադատական բողոքարկանը, իսկ Բողոքներ քննող անձը իրավասու չէ կամայականորեն սահմանափակելու գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձի բողոքարկելու իրավունքը:

Ավելին, Օրենքի 50-րդ հոդվածի 2-իդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Այսինքն, այն կարծիքը, թե բողոքաբերը չէր կարող վիճարկել գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացմանն ուղղված գործողությունների իրավաչափությունն այն դեպքում, երբ նա քննարկվող ընթացակարգին չի մասնակցել և դրա շրջանակներում հայտ չի ներկայացրել, անտրամաբանական է, քանի որ բողոքաբերը ներկայացված բողոքով վիճարկել է գնման առարկայի բնութագիրը և անհեթեթ է կարծել, թե գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները բողոքարկելու իրավունք ձեռք բերելու նպատակով անձը պետք է միաժամանակ հայտ ներկայացնի տվյալ ընթացակարգին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

1. Անուշ Պետրոսյան ԱՁ-ի կողմից 04.03.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/8 ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ